կարևոր պիտոյից պակասութիւնքը և կարօտութիւնը ունենայ. հսկել՝ որ ս. Էջմիածին, ճոխանայ և զօրանայ, որպէս զի Ազգի և ս. Եկեղեցւոյ կարօտութիւնները լիովին մատակարարէ և զնոսա զօրացնէ ըստ արժանւոյն. հսկել՝ որ ս. Էջմիածինը համայն Հայկազանց բարի բարի օրինակներով և նախանձելի սխրագործութեամբք՝ ուրախութեան և մխիթարութեան արձաններ կանգնէ. հսկել՝ որ ժամանակիս ողջախոհ լուսաւորութիւնը և դաստիարակութիւնը մեզ ՚ի բարիս աջակից և օժանդակ սփռի մեր Հայրենեաց զաւակաց մտքերուն անդաստաններում. հսկել՝ որ ամենևին հակառակ դէպքերու որոգայթները զմեզ ՚ի կորուստ անկարողանան մատնել, և մեր առաջև խորտակուին վնասակար բռնութիւնք և ամենայն զօրութիւնք. հսկել՝ որ երկնից ամենակալ նախախնամութեան Աջը մեզ զօրավիգն և պաշտպան լինի, և Առաջնորդ բարի և յաւիտենական ՚ի գիւտ երջանիկ կենաց և պարծանաց. միով բանիւ՝ հսկել՝ որ ս. Էջմիածնով մեր բոլոր բարի նպատակները և բաղձանքները լրումն ստանան. և նորա վեհ գագաթը մեծափառ պսակուի:

Ահաւասիկ Հայկազանց պարտաւորութեանց ըստ ժամանակիս անհրաժեշտ մի նկարագիրը՝ կամ թէ լաւ ևս ասել՝ մի ուրուագիծը, զոր կատարելը ազգային անհատական պարտաւորութիւն միանգամայն և իրաւունք է. և որուն Հայը անձկանօք պիտի դիմէ իբրև իւր սրբազան պաշտաման: Եւ կնքեմ խօսքս յուսալով՝ որ ինչպէս ս. Էջմիածինը իւրաքանչիւր Հայկազանց համար նուիրական է, որպէս կեդրոն Հայաստանեայց առաքելական ս. Եկեղեցւոյ, նոյնպէս և նուիրական են և պէտք է լինին միշտ այն պարտաւորութիւնները. զորս որքան քաղցր և անձկալի է նուիրել ՚ի պարծանս ս. Էջմիածնի, որով և ՚ի յառաջադիմութիւն և ՚ի փառաւորութիւն Հայրենի Ազգին:

Արդարև ս. Էջմիածինը և Հայ ազգութիւնը պէտք է լինին մեր նպատակը, մեր ցանկալի գանձը, որոց մէջ պիտի կեդրոնանան մեր սրտերն ևս անբաժան յաւիտեան: "Ուր գանձք մեր են, անդ և սիրտք մեր եղիցին". Ա.

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ներկայ տարւոյս՝ վերջին դեկտ. ամսոյ մէջ ընդհանուր ժողով գումարել կամելով ս. Պապն ՚ի Հռովմ, հրաւիրանաց նամակ առաքեր է նաև առ ս. Պատրիարքն Հայոց Պօլսոյ: Որ և նա յատուկ գրութեամբ իւրով ներկայացուց Նորին Վեհափառութեան ս. Կաթողիկոսի ամենայն Հայոց:

Արդ թէ գեր. Պատրիարքի նամակի և թէ Վեհ. ս. Կաթողիկոսի պատասխանական կոնդակի օրինակները կը փու-

թամբ հաստատել 'ի տեղեկութիւն ամենայն հարազատ որդւոց Հայաստանեայց Առաքելական ս. Եկեղեցւոյ

---

## Վեհափառ Տէր

Հայրապետն Հռովմէական Եկեղեցւոյ Պիոս Թ. ամսոյս 8 և մեզ յառաջագոյն յղեալ իւր 'ի ձեռն Հոգևոր պաշտօնէից Եկեղեցւոյ իւրոյ 'ի Կոստանդնուպօլիս տեղապահն իւր Լատինաբարբառ.

Յեկելոցս աստի առ Մեզ Լատին Եկեղեցականաց ծանեաք եթէ պարունակութիւն տեղեկագրին ընդհանրական հրաւէր է Ազգային Եկեղեցւոյ Մերոյ առ համագումար ժողովն, որոյ գումարումն ասէին լինել 'ի Հռովմ յութերորդի աւուր Դեկտեմբերի ամսոյ 1869 տարւոյ.

Մեք որպէս պարտն էր պատասխանի արարաք այսպէս թէ՝ է և մեր Գերագոյն Հայրապետ 'ի Ս. Էջմիածին, գլուխ Հայաստանեայց Եկեղեցւոյ որ միայն ունի զիրաւասութիւն 'ի վերայ սրբոյ Եկեղեցւոյս Մերոյ և ամենայն Հոգևոր հովուաց նորին. վասնորոյ և նմա անկ է քննադատել զհրաւիրագիրն. Ի վեր է քան զձեռնհասութիւն մեր, և որ ընդ մեօք Եպիսկոպոսաց ամենեցուն խօսիլ ինչ յաղագս բանիս այսորիկ.

Ընդ այս յայտարարութիւն մեր մեկնեցան եկքն և թողին զտետրակն, զորոյ և զՀայերէն թարգմանութիւն առաքել մատուցանեմք Ձերում Վեհափառութեան և յանձն առնեմք իմաստութեան Մեծի Հայրապետիդ առնել զոր արժանն է.

Լսեմք ևս եթէ և այլոց վիճակաւոր Եպիսկոպոսաց Տաճկաստանի առաքեալ իցէ 'ի տետրակաց անտի.

Մնամք Վեհափառութեան Ձերում
Պատրիարք Կ. Պոլսոյ Պօղոս Արքեպիսկոպոս

(Տեղի Կնքոյ)

Ի 14 դեկտ. 1868.

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Կ. Պոլիս

---

ԿՆԻՔ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝ ծայրագոյն Պատրիարք համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթողիկէ ԷՋՄԻԱԾՆԻ.

Գերապատիւ Պատրիարքի Կ. Պոլսոյ Պօղոսի Արքեպիսկոպոսի սիրելի Եղբօր մերոյ խնդալ.

Զյայտարար գրութիւն ձեր 'ի 14 դեկտեմբերի անցելոյ ընդ համարաւ 1417 ընկալեալ հանդերձ թարգմանութեամբ Թղթոյ Սրբազան Հայրապետին

Հռովմայ Պիոսի Թ. մատուցելոյ Զեզ ՚ի կողմանէ փոխանորդի Նորին եղելոյ այդր ՚ի Մայրաքաղաքիդ, և ընթերցեալ զայն ուշի ուշով տեղեկացաք դիտաւորութեանն, որով մտադիր է կալ՚լ ժողով ընդհանրական յ8Ն դեկտ. մբերի այսր ամի ՚ի Հռովմ. առ որ հրաւիրեալ է զՁեզ և զայլս:

Ըստ անհատանելի կամաց բարձրելոյն Աստուծոյ և մերս նուաստութիւն գոլով մի ՚ի Հովուապետաց Քրիստոնէական Հօտին, թէև ցանկամք միութեան Կաթուղիկէ եկեղեցւոյ և փափաքիմք հանապազ տեսանել զերծիմն հակառակութեան բարձեալ ՚ի միջոյ, և զսէր և զխաղաղութ՚ ՚ի միութեան անդ Եկեղեցւոյ թագաւորեալ. ըստ որում հակառակորդին է գործ ընդդէմ կալ միութեան մարմնոյ Եկեղեցւոյն Քրիստոսի, բայց քաջ հաստ եղեալ մնաց և իմատից Թղթոյ ս. Պիոսի Թ. ցաւիմք յոյժ, զի բաղձալին և մեզ միութիւն, զոր կամի և Փրկիչն աշխարհի և աղօթէ առ Հայր թէ "եղիցին մի, որպէս և մեք մի եմք", անյուսալի իմն երևի այժմէն իսկ ՚ի ժողովոյ անտի:

Եթէ իրապէս փափաքեալ է Հռովմայ՝ միութեան եկեղեցւոյն Քրիստոսի, ապաքէն պարտ էր կանխաւ հետամուտ լինել այնմ թէ՝ ուստի՞ սկիզբն էառ պառակտումն եկեղեցւոյ ՚ի միութենէ, և զմէ՞ արդեօք դաւանութեամբ և սիրով ՚ի միութիւն Գլխոյն Քրիստոսի զօդեալ անդամք որոշեցան ՚ի միմեանց և ծագեցաւ ցաւալին այն բազմադարեան գժտութիւն յընդհանուր Քրիստոնեայս, ո՞չ ապաքէն որպէս քաջայայտ է բովանդակ աշխարհի՝ ծնունդ էր այն տքնութեանց Աթոռոյն Հռովմայ առ ՚ի նախապատիւ և գերագահ հանդիսանալ քան զայլ Աթոռս Առաքելեայց:

Ապա ուրեմն ցանկալի էր ամենայն Ճշմարտասիրաց տեսանել նախ զՋանս Նորին Սրբազնութեան ՚ի բառնալ զնախասկիզբն գժտութեան ՚ի միջոյ և ընթանալ ընդ արահետ շաւիղս նախնի Հարցն սրբոց, և ըստ օրինի կանխապէս խորհրդակցեալ ընդ Առաքելեան Եկեղեցւոյ Հովուապետս իւրաքանչիւր Ազգաց՝ յայտնել կանոնական յօդուածովք զբուն նպատակ իւր և զկէտս խնդրոց քննելեաց ՚ի ժողովին անդ, և յետ ընդունելոյ զհաւանութիւն Նոցին՝ համակրութեամբ որոշել զտեղի և զժամանակ ժողովոյն:

Անկայն ՚ի բաց թողեալ ս. Հայրապետին Հռովմայ զայն որ յըղձալին հայի միութիւն ՚ի Յիսուս Քրիստոս, ինքնին հաճեալ է հրատարակել նախ զօրինակ հրաւիրական Թղթոյ, և ապա առաքել զայնս առ Հովիւս Եկեղեցւոյ, որով ՚ի կարծիս տայ ձկտիլ ամենեցուն թէ՝ Նորին Սրբազնութիւն կամի զանձն իւր ցուցանել գերագոյն իշխող, և գլուխ Քրիստոնէութե՛ ոչ ճանաչելով զՀովուապետս Առաքելեան եկեղեցւոյ համապատիւս ինքեան աստիճանօք և իրաւասութեամբ և Առաքելական աջոր-

գութեամբ պատուեալս, զորս Հոգին սուրբ հաւասար իշխանութեամբ և շնորհօք զարդարեաց։ Եւ զի զԱթոռն Հռովմայ բացայայտ հռչակէ 'ի Թղթին կեդրոն միութեան, զորպիսի վարդապետութիւն ոչ ընդունի սուրբ և ուղղափառ եկեղեցին Հայաստանեայց ընդ այլոց ազգաց Արևելեան եկեղեցեաց՝ Գլուխ Եկեղեցւոյ զփրկիչն մեր միայն՝ զՔրիստոս ճանաչելով։

Նա որ խնդրէ զՄիութիւն Եկեղեցւոյ, զանց արարեալ զկարի կարևորօք, ո՛րք պարտ էին լինել անյեղլի հիմն գումարման ժողովոյն, իւրովի կարծեցեալ միապետական գերիշխանութեամբ ինքն իսկ և ևս քան զևս հեռանայ 'ի միութենէ կաթողիկէ Եկեղեցւոյ. և ո՞ւմ չիցէ յայտնի՝ թէ յայնպիսի սկզբանց հակառակելոց իմաստից ողջամիտ վարդապետութեանց սրբոյ Աւետարանին, դըժուարին է ակնունիլ ճշմարիտ միութեան, թերևս նորանոր վէճից և անդարմանելի պառակտմանց ևս և դառնագին հակառակութեանց բացցին ասպարէզ 'ի գայթակղութիւն բազմաց և 'ի նախատինս Քրիստոնէական սուրբ կրօնի։

Ապաքէն մեք որ յամենայն ժամ տըքնիմք վասն հոգւոց 'ի Քրիստոս հաւատացեալ ժողովրդոց յանձնելոց մեզ 'ի տեառնէ և ջանամք պահել զանդորրութի Հօտին մերոյ, և պարծիմք Տէրամբ յԱռաքելական սուրբ Եկեղեցի մեր, որ 'ի ձեռն սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի հաստատեցաւ 'ի վէմն Քրիստոս. Եւ աղօթիւք բազմաչարչար նահատակի Ս. Գրիգորի մեծի Հայրապետի ցայսօր կայ անդրդուելի 'ի դըրանց դժոխոց ինքնուրոյն իրաւամբ, հարկ անհրաժեշտ համարիմք ծանուցանել Արքայական Եղբայրութեան ձերում զգուշ լինել 'ի հրաւիրմանէ անտի և 'ի ժողովոյ որ զըկեալ գտանի 'ի հիմանց օրինաւորութեան և զգուշացուցանել նաև զԱրք եպիսկոպոսունս, և զամենայն Առաջնորդս վիճակաց և Եկեղեցեաց մերոց որ 'ի Տաճկաստան, չտալ տեղի շփոթից և տարաձայնութեան։

Եւ միաբան աղաչեսցուք յամ̄ սըրտէ, որպէս և միշտ աղաչեմքս, զի Գլուխն անկեան և խաղաղութիւն Եկեղեցւոյ սրբոյ Քրիստոս Փրկիչն ամենեցուն, որ արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ կոչելով զամենեսին 'ի միարօտ Աւետարանական վարդապետութեան, պահեսցէ 'ի խաղաղութեան զեկեղեցի իւր սուրբ, և զԱզգս Հայոց պահպանեսցէ յանակնունելի փորձութեանց։

Ողջ լերուք զօրացեալ Տէրամբ։

Համար 31 (Ստորագրութիւն)
ի 11 Փետրվարի

---

յՕրագրութեանց Սինոդի Ս. Էջմիածնի.

Յունվ. — Գեր. Գրիգոր Սագինեանց և Սերովբէ Արարատեան Եպիսկոպոսունք, և Արք. Գրիգոր վարդա-